Արձանագրություն N 2

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2024/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տեքստիլի մաքրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

3 դեկտմբերի 2024թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Շիրազ Առաքելյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Նարեկ Խանամիրյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2024/4 ծածկագրով գնման ընթացակարգի հատերի բացման, գնահատման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2024/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Շիրազ Առաքելյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը, հասցեն	(ԱԱՀ վճարող) կամ (ԱԱՀ չվճարող)	Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ/	Գնման գին /ՀՀ դրամ /
1	**Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ**	ԱԱՀ չվճարող	1683000	1700000
	ԱՁ Աստղիկ Մարտիրոսյան		1700000	

Հանձնաժողովը ուսումնասիրելով համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած ճանաչված մասնակից Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Մասնավորապես. Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ-ի հայտում ներառված Հավելված 1-ը Դիմում Հայտարարությունը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևին, դրանում բացակայում է ընկերությանը փոխկապակցված անձանց վերաբերյալ հատվածը, ինչպես նաև Դիմում Հայտարարությունը սահմանված կարգով ստորագրված չէ (հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ):

Հանձնաժողովը որոշեց՝

- Ընթացակարգը կասեցնել մեկ աշխատանքային օրով և Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ -ին առաջարկել հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ		Շիրազ Առաքելյան
անդամներ		Ջուլիետա Բաբայան
		Նարեկ Խանամիրյան
քարտուղար		Սպարտակ Հարությունյան